

L P

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏԶԻ ՎԱՆՔԸ ՆԱՊԼՈՒՍԻ ՄԷՋ

Նապլուս քաղաքը կը գտնուի Կեդրոնական Պաղեստինի մէջ. անոր հարաւն է Քարիզիմ եւ հիւսիսը՝ Գերազ լեռը: Հին Սիւքէմէն՝ դէպ ի արեւելք մէկ քիլոմէթր է. կ'ոռոգեն զայն բազմաթիւ ընտիր աղբերակներ՝ որոնց զլիսաւորը Քարիզիմի ստորտէն բղխելով՝ կը կոչուի Բաւ կը-Սյն: Նապլուսը պարիսպով մը շրջապատուած է եւ ունի բազմաթիւ դռներ, որոնց զլիսաւորներէն մին՝ կը բացուի արեւելք և միւսը՝ արեւմուտք: Նապլուսի բնակչութիւնը կը բաղկանայ Իսլամներէ, Յոյներէ, Հրեաներէ, Սամարացիներէ և Լատիններէ:

Նապլուսի վրայ տեղեկութիւններ կու տան արաբ աշխարհագիրներն ալ, ի մէջ այլոց, Եագուք (1225) և Տիւսաֆի (1300). Եագուք հետեւեալ կերպով կը գրէ. «Նապլուս նշանաւոր քաղաք մ'է Պաղեստինի մէջ. ան շինուած է երկու լեռներու մէջ, լայնութիւն չունի, նեղուածք է, բայց երկայնութիւն ունի. Նապլուս ջրառատ է, վասն զի կռթնած է լեռան. որուն հողը քարուտ է: Նապլուսէն Երուսաղէմ 10 մղոն է: Քաղաքը ընդարձակ հողեր ունի և գեղեցիկ շրջակայք մը, ամէնքն ալ շինուած Ս. Լեռան մօտ: Նապլուսի ետեւի կողմը կը գտնուի լեռ մը, ուր Ադամ, ինչպէս կը պատմեն, երկիրպագելով աղօթեց, և հոն կար լեռ մը՝ ուր ըստ հրէական հաւատալեաց, Աբրահամ զոհ ըրաւ հոն և զոհն էր Իսահակը: Հրէայք մեծ յարգանք ունին հանդէպ այս լեռան, և զայն Քարիզիմ կը կոչեն: Նապլուսի մէջ կը բնակին Սամարացիներ և որոնք միշտ հոն կը մնան, և դուրս կ'եննեն միայն վաճառականութեան և շահու նպատակաւ: Սամարացիները Հրէից մէկ ազանդը կը կազմեն: Անոնք Նապլուսի մէջ ունին ընդարձակ մզկիթ մը (1225), անոր համար քաղաքը կը կոչուի էլ-Քուս. անոնք Երուսաղէմը կը նզովեն և Երբ անոնցմէ մին ստիպուի հոն երթալ, քար մը կ'առնէ և զայն